Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

532 355

# ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

A II/41590

№ 1

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՂԱՐԱՔԻԼԻՍԱ 1934

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

532 355

# ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

A II 415920

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

№ 1

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՂԱՐԱՔԻԼԻՍԱ 1934

# «ՈՒՂԵՑՈՒՅՑ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԹԻՎ

Ռազմական պարբերական մամուլում վերջերս շատ նյութեր են հրապարակվում, մասնավորապես կրտսեր հրամատարների հրաձգատակտիկական պատրաստության շուրջը, որը ստորաբաժանումների աշխատանքի լավագույն փորձը փոխանակելու և այն մաքսիմալ չափով տարածելու համար։

Անշուշտ այդ հարուստ և արժեքավոր նյութերն անհնար են «Կարմիր Զինվոր»-ի էջերում լուսաբանել լրիվ, ուստի նպատակահարմար համարվեց դրանցից մեկ անգամ լույս ընծայել ներկա բրոշյուրի ծավալով «Կրտսեր հրամատարի Ուղեցույց» բրոշյուրը։

Խմբագրությունս գտնում է, որ այս նախաձեռնությունը դրական արձագանք կգտնի մեր դիվիզիայի կրտսեր հրամատարների մոտ, այն իմաստով, որ կրտսեր հրամատարը, սիստեմատիկորեն կարդալով Կարմիր բանակի տարբեր զորամասերի աշխատանքների լավագույն փորձի մասին, իր ջոկի մարտական ուսուցումը պետք է դնի ավելի բարձր աստիճանի վրա։

Մեր կրտսեր հրամատարները, այլև միջին հրամկազմը, կարդալով բրոշյուրում իրենց ստորաբաժանման ուսուցման վերաբերյալ նյութեր, պետք է խմբագրությանս գրեն — թե ինչ հարցեր են ավելի հետաքրքրում իրենց և թե ինչ թերություններ ունի այս բրոշյուրը։ Նրանք պետք է ցուցաբերեն իրենց ակտիվ մասնակցությունը, նյութեր տալով ջոկի ուսուցման վերաբերյալ իրենց դրական փորձի մասին։

«Կ. Զինվոր»-ի Խմբագրություն

# ՀՐԱՁԻԳ ՋՈԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

*Ջոկի հրամանատարն անմիջորեն ղեկավարում է ջոկի կրակը մարտում։ Դասահրամից ստանալով խնդիրը դասակի հրամանատարից, նա.—*

*— Ուսումնասիրում է տեղանքը մատնանշած ուղղությամբ կամ շերտում և ծանոթանում է նրա առանձնահատկություններին հետ հրաձիգներին։ Նշում է մի շարք տեղական առարկաներ որպես կողմնորիչներ՝ ուղղորդելու համար նշանը ցույց տալու ժամանակ և հաղորդում է մարտիկներին նրանց անունները, ելնելով նրանց բնորոշ հատկանիշներից։*

*— Վարում է մարտադաշտի դիտողությունն անձամբ կամ դիտողների օգնությամբ։ Որոշում է հայտնաբերած նշանների գտնվելու տեղը, բնույթը, չափն ու հեռավորությունը և վճռում է կրակի գործադրմանը։*

*— Ընտրում է դիրքի տեսակը և կրակային խնդիրը և առաջադրում նրան, ցույց տալով նշանը և որոշելով կրակի տեսակը, ժամանակը (չեթե ժամանակը որոշված չէ դասակի հրամանատարի կողմից) և կրակի բացման մոմենտները, իսկ չեթե պետք է և նաև հրապաշարի քանակը։*

*— Նշանակում է նշանացույցի ամենաշահավետ հատուածը, իսկ հարկավոր դեպքերում նաև նշանառության կետը։*

Ծանոթություն.—*Նռնականետային ջոկի հրամանատարն այս դեպքում մատնանշում է հեռակայական վառոդակի, կվադրանտի հատումները և նշանառության կետը։*

*— Անդուլ կերպով պահպանում է կրակի կարգապահությունը, հետևելով, որ բոլոր հրամաններն ու պատվերները*

կատարվեն անմիջապես ու ճշտությամբ, վոր կրակն իրոք վարեն մատնանշած նշաններին, վոր հրաձիգները ճիշտ հաստատեն նշանոցային հարմարանքները և կրակ՛ վարեն, ճշտորեն պահպանելով հրաձգության յեղանակներն ու կանոնները:

◆ Հետևում է կրակի գործոնությանը և ճշտում է կրակը, մտցնելով, յերբ պետք է ուղղումներ նշանոցի ու նշանառության կետերի մեջ:

Ծանոթություն.—Նռնականետերի համար՝ ուղղումներ հեռակայական փողակի և կվադրանտի հատուցումներում ու նշանառության կետերում:

◆ Հարկավոր դեպքերում կենտրոնացնում է, բաժանում և և տեղափոխում է կրակը նոր նշանների վրա:

◆ Մոտիկ հեռավորություններում, յերբ դժվարացված է դիտավարությունը, հանձնում է (հրամանով, ազդանշանով նշանով) կրակի վարելը մարտիկների ձեռքը բավականանալով հարկ յեղած դեպքերում նշանի ու նշանոցի ցույց տալով, բայց վոչ մի դեպքում չդադարելով հետևել կրակի կարգապահության ու գործոնությանը:

◆ Հետևում է հրապաշարների խնայողաբար ու ճիշտ ծախսմանը, վարում է նրանց առկայության ճիշտ հաշվառմանը և միջոցներ է ձեռք առնում նրանց ժամանակին լրացմանը:

## ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

◆ Ծածկված պատսպարելով ջոկը մատնանշած վայրում, հաստատում է դիտողություն ու կապ: Բացատրում է մարտական խնդիրը, մանրամաս նրան ծանոթացնելով մարտիկներին ջոկին արված շերտում տեղանքի առանձնահատկություններին հետ: Ցույց է տալիս հնարավոր կրակային բնագծերը և տեղական ծածկարանները, վորոնց կարող է օգտագործել հակառակորդը հարձակման ժամանակ, ինչպես նաև մի քանի խորքի աչքի ընկնող տեղական առարկաներ (կողմնորոշներ), վորոնք կարող են հեշտացնել նշաններ ցույց տալը և նրանց գտնելը:

◆ Վորոշում է և հաղորդում է մարտիկներին հեռավորությունները մինչև նշված կողմնորոշները և մինչև ամենից կարևոր բնագծերը, կազմելով միաժամանակ ամենապարզ հրաձգային քարտ:

◆ Պատրաստում է ջոկի գրաված տեղը մարտի, սարքելով խրամատներ ու այնպիսի հարմարանքներ, վորոնք ավելացնում են հրաձգության դիպուկությունը։ Միջոցներ է ձեռք առնում լավագույն ձևով քողարկելու համար իր դասավորությունը։

◆ Հրամայելով ձեռքի գնդացրին ու հրաձիգներին գրավել տեղերը հրաձգության համար, խնամքով ստուգում է յուրաքանչյուր մարտիկի ու զենքի դասավորությունը գնդակոծի նըկատմամբ, հենարանների օգտագործումը, քողարկումը և հակառակորդի կրակից ծածկվելը։

◆ Վարելով մարտադաշտի և օդի անընդհատ դիտողությունը, ղեկավարում է ձեռքի գնդացրի ու հրացանաձիգների կրակը, ձգտելով ինչ եւ վոր լինի կատարել իրեն առաջադրած խնդիրը։

◆ Յերբ հակառակորդը ճեղքում է պաշտպանության առջևի յեզրը, շարունակում է կրակ վարել ճեղքած խմբերի թևին ու թիկունքին, գնդակոծելով նրանց և այդպիսով իսկ կրակով նախապատրաստելով վաշտի յերկրորդ շարանի դասակի հակագրոհի անցնելը։

## ՀԵՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

◆ Բերելով ջոկը հարձակման համար յելման դրության մատնանշված վայրը և ծածկված դասավորելով մարտիկներին, սահմանում է դիտողություն ու կապ։

◆ Բացատրում է առաջադրած մարտական խնդիրը և կատարման պլանը։

◆ Ծանոթացնում է մարտիկներին հակառակորդի դասավորության ու տեղանքի հետ՝ հարձակման համար ջոկին նշանակված ուղղությամբ, մատնանշում է յենթադրվող կրակային բնագծերն ու տեղանքի կետերը, ինչպես նաև այն ծածկարանները, վոր անհրաժեշտ կլինի բնագծերի առաջ քաշման ժամանակ։

Ղեկավարում է ձեռքի գնդացրերի ու հրացանաձիգների կրակն ու շարժումը, կազմակերպելով նրանց համագործակցությունը և օգտագործելով ամենից նպաստավոր մոմենտները, ապահովելով տեղաշարժման արագությունն ու ծածկվածությունը և կորուստների նվազումը։

◆ Գրոհի համար յելման դրությանը հասնելուն պես կրակը հասցնում է ամենաբարձր լարվածության ու դիպուկության և

ազդանշանով, կամ հարմար մոմենտ ընտրելով, շարժումով հրաձ-գության վարելով, ջոկի հետ դրոհի չի շարժվում, ձգտելով ըստ հնարավորին արագ՝ գրավել հակառակորդի նշված կրակային կետը:

◆ Գրոհած կետին մոտենալուն պես կազմակերպում է կրակը հակառակորդի թևերին ու թիկունքին, աշխատելով հեշտա-ցնել հարևան ստորաբաժանումների գրոհը և գրավել հակառա-կորդի հարևան կրակային կետերը. հակառակորդի նահանջի ժա-մանակ վոչնչացնում է նրան կրակով:

Ոդային թշնամու դեմ հրաձգության նշանակված ջոկի հրամա-տար:

◆ Ստանալով խնդիրը և ցուցումն այն մասին, թե վոր-տեղ դասավորել ջոկին, ընտրում է դիտողության ու հրաձգու-թյան համար հարմար տեղ, պատրաստում է հարմարանքներ ոդային նշանների դեմ հրաձգության համար:

◆ Կազմակերպում է մարտապահպանություն և ոդի դիտողությունը:

◆ Դասավորում է ձեռքի գնդացիրը իսկ նրա կողքերին հրացանաձիգներին արագ կրակ բանալու համար լիակատար պատրաստականությամբ ամենից սպառնալի ուղղություններում և միջոցներ է ձեռք առնում նրանց քողարկման համար:

Ծանոթություն: Հրաձիգների դասավորությունը գնդացրի յերկու կողմերում ապահովում է նոր ուղղությամբ նրանց ավելի արագ տեղափոխումը:

◆ Ցուցումներ է տալիս և սովորեցնում է գնդացրի ու հրա-ձիգների տեղափոխման արագության ու ստուգությունը տար-բեր ուղղություններով ոդային նշանների դեմ հրաձգության համար:

◆ Անդուլ կերպով պահպանում է դիտողների աչալրջու-թյունը և ջոկի պատրաստականությունն արագ կրակ բանալու համար:

◆ Գնդակոծի շերտում հակառակորդի սավառնակ յերևալու դեպքում վորոշում է հեռավորությունը և հրամաններ է տալիս կրակ բանալու համար, ցույց տալով նշանը, նշանոցը, նշանա-ռության կետը և կրակի տեսակը,

◆ Գիտենալով իր և հարևան ստորաբաժանումների դա-սավորությունը, խստիվ հետևում է, վոր ձիգերը նրանց համար վտանգավոր ուղղություն չընդունեն անդուլ հետևում է կրակի կարգապահությանը:

ՀՀԳ—34 պրակ. 1-ին կրակի ղեկավարում գլխից:

# ԻՄԱՑԻՐ ՀՐԱՑԱՆԻ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*)

## ՀՐԱՑԱՆԻ ԱՄԵՆԻՑ ԲՆՈՐՈՇ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐ ԽԱԽՏՈՒՄ ԵՆ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ԴԻՊՈՒԿՈՒԹՅՈՒՆԸ

*Հրացանի ամենից բնորոշ անսարքությունները, վորոնք իջեցնում են նրա մարտական հատկությունները և խախտում են հրաձգության դիպուկությունը, հանդիսանում են հետևյալները.—*

Գնդակների անհնարմալ շեղումները հրաձգության ժամանակ *(ըստ բարձրության և կողքի ուղղության)։*

Պատճառները.—

*ա) Ծախոտված է հասիկը կամ ծռված է նրա գագաթը,— գնդակները շեղվում են հասիկի գագաթի տեղափոխման հակառակ կողմը։*

*բ) Ծռված է կամ թեքված է նշանոցային շրջանակը—գնդակները շեղվում են գծատյի տեղափոխման կողմը։*

*գ) Փողը վորևէ կողմով սեղմվում է փողակալի ծայրին— գնդակները թեքվում են սեղմվելու հակառակ կողմը։*

*դ) Փողի առջևի մասը սեղմվում է փողակալի փորակի կամ փողապատի ուրիշ պրծած մասերին (հայտաբերվում է փայտի վրայի այրվածքներով)—գնդակները շեղվում են սեղմվելու հակառակ կողմը։*

*ե) Փողատուփի հենարանն անհավասարաչափ է կպչում բնմխին (նավակին) (հայտաբերվում է կպչելու տեղում հղկվածքներով)—գնդակները շեղվում են նվազագույն չափով կպչելու կողմը։*

*զ) Ագուստը թեքված է կամ ծռված է մի կողմի վրա— գնդակները շեղվում են դեպի առջևի մասի թեքվելու կողմը.*

*է) Փողը ծռված է մի վորևէ կողմը,—գնդակները շեղվում են փողաբերանի ծռվելու կողմը։*

---

*) ՀՀԳ—34. պրակ 1. կրակի ղեկավարումը գլխից։

ը) Ուրդ (փոս ընկած տեղ) կա փողաբերանի շուրթին—գնդակները շեղվում են խորշի հակառակ կողմը։

թ) Փողաբերանի շուրթի վրա ուղղահայաց լինելը—գնդակները շեղվում են շուրթի իջեցման կողմը։

ժ) Անհավասարաչափ են պտտակված հենարանի ու առի պտուտակները (երբ չեն պտտակված կամ ավելի յեն պտտակված, քան պետք է),—գնդակները շեղվում են դեպի վեր կամ դեպի ցած։

ի) Սվինը ծռված է այս կամ այն կողմը,—գնդակները շեղվում են հրացանի ծանրության կենտրոնի տեղափոխման հակառակ կողմը։

## ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Հրացանի հարդարման անճիշտ խփոցի հայտաբերած պատճառների վերացման համար հրացանը ուղարկել զինարհեստանոցը, որից հետո կրկին ստուգել այն հրաձգությամբ և բերել ճիշտ խփոցի։

— Խստիվ պահպանել հրացանի քանդելու, սարքելու, մաքրելու, յուղելու և պահպանելու կանոնները։

— Քանդած կամ սարքած դրությամբ հրացանի զննության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել այնպիսի անսարքությունների բացակայության վրա, վորոնք կարող են հրացանի ճիշտ խփոցի խախտման պատճառ լինել։

## ԳՆԴԱԿՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ՑՐՈՒՄԸ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Պատճառները.—ա) Փողանցքի մաշվածությունը, մանավանդ փողաբերանի մասի անհավասարաչափ մաշվածությունը. բ) ակոսների առերի մաշվածությունը կամ կլորացումը. գ) ժանգը, քերծվածքները, խորշերը փողանցքում, մանավանդ փողաբերանի մասում. դ) սվինի ճոճումը. ե) նշանոցային շրջանակի ճոճումը. զ) չափազանց ծանր կամ չափազանց թույլ ձգանը. է) հենարանի ու առի պտուտակների կամ նրանցից մեկն ու մեկի

ձևով չպատասխանումը կամ նրանց անհամապատասխան ամրացումը. ը) փողպատուփի հենարանի անհամապատասխան կամ վոչ միաձև կպչելը բեռնոցի մակերեսին. թ) հրաձգության միջոցին շամփրի դուրս ցատկելը։

## ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Հրացանի հարդարման և խփոցի կուտակությունը խախտող հայտաբերված անսարքությունները վերացնելու համար հրացանն ուղարկել զինարհեստանոցը, վորից հետո կրկին ստուգել հրացանը հրաձգությամբ։

## ԿԱՆԽՈՒՄԸ

— Ճշտիվ պահպանել հրացանի քանդելու, սարքելու, մաքրելու, յուղելու և պահպանելու կանոնները։

—Հրացանը զննելու ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել այնպիսի անսարքությունների բացակայության վրա, վորոնք կարող են հրացանի մարտական հատկությունների իջեցման պատճառ դառնալ։



ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՆԵՆՔ ՁՈԿՀՐԵՄ

ԸՆԿ. ՈՒԿՎԱՐՈՎԻ ՓՈՐՁԸ

# ԻՆՉՊԵՍ ԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԻՄ ԴԱՍԸ

Անցյալ տարվա դեկտեմբեր ամսում Հյուսիսային Կովկասի ռազմական շրջանի պատգամավորությունը գնաց 32-րդ հրաձգային դիվիզիան ուսումնասիրելու այդ առաջավոր դիվիզիայի փորձը։

Այժմ յես կպատմեմ թե ինչպես փոխ առա 32-րդ դիվիզիայի փորձն իմ ջոկի հետ տարվող աշխատանքում, թե ինչ հաջողություններ յես ձեռք բերի իմ կարմիր բանակայիններին պատրաստության գործում։

Ամենից առաջ յես զրույց ունեցա 32-րդ դիվիզիայի 94-րդ գնդի կրտսեր հրամանատարների հետ և ամենից առաջ հետաքրքրվեցի նրանով, թե նրանք ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԵՐԸ։ Ինձ առանձնապես հետաքրքրում եր հրաձգային պատրաստությունը, վորովհետև ինքս սնայպեր եմ ցանկանում եմ, վոր իմ ջոկի բոլոր մարտիկներն էլ սնայպերներ դառնան։

Վերոհիշյալ դիվիզիայի 94-րդ գնդի ստորաբաժանումներից մեկում մենք տեսանք, թե ինչպես են տանում հրաձգային դասը։ Նրանցում ջոկը բաժանված եր յերեք խմբի, վորոնք զբաղվում եյին յերեք կետում։ ՄԵԿ ԿԵՏՈՒՄ հրահանգիչը սովորեցնում եր, թե ինչպես պետք է նշանառություն կատարել հրացանակալից փոքր հեռավորությունից. ՄՅՈՒՍ ԿԵՏՈՒՄ հրահանգիչը դիաֆրագմայի օգնությամբ մշակում եր յերկու կարմիր բանակայինի (կուրսանտի) հրաձգային ունակությունները. իսկ ԵՐՐՈՐԴ ԿԵՏՈՒՄ հրահանգիչը մշակում եր պառկած հրաձգության համար կրակի պատրաստության նմուշները (պրիոմները)։

Ինքը ջոկի հրամանատարը հերթով ստուգում եր կարմիր բանակայիններին նշանառությունից, հրահանն իջեցնելու վարժու-

թյունից որոսկոպի օգնությամբ։ Խմբակները (խմբերը) պարապմունքի ընթացքում փոխվում էին։

Այդ փորձը յես լրիվին փոխ առա և այժմ օգտագործում եմ իմ ջոկի կարմիր բանակայինների պատրաստության ժամանակ։ Այժմ յես իմ հրաձգային պարապմունքները կազմակերպում եմ այնպես, ինչպես կազմակերպում են 32-րդ դիվիզիայում:

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ

Հրաձգային պարապմունքների համար սովորաբար մեզանում հատկացվում են օրական 2 ժամ։ Յես նախօրոք կարմիր բանակայիններից մեկին առաջադրանք եմ տալիս, թե ինչ է հարկավոր պատրաստել հրաձգային դասի համար։ Դասից առաջ յես ամբողջ ջոկի ներկայությամբ հրահանգիչներին պատմում եմ, թե ինչպես պետք է անցկացնել պարապմունքը, ինչի վրա հատկապես պետք է ուշադրություն դարձնել: Միաժամանակ յես պատմում եմ իմ ջոկի կարմիր բանակայիններին, թե ինչ տարրեր (էլեմենտներ) մենք պետք է մշակենք:

Պարապմունքների համար յես ջոկը բաժանում եմ խմբակների։ Օրինակ՝ մշակում էինք հրացանով հրաձգությունների կուրսի առաջին խնդիրը։ Դասերից մեկում մենք պետք է մշակեինք 1 ա և 1 բ վարժությունները և նախապատրաստական վարժությունների մի մասը—1-ին խնդիրը, հեռավորությունների վորոշումը։

Ջոկը բաժանելով յերեք խմբակի, յես հանձնարարեցի առաջին խմբակի հետ պարապել հրահանգիչ ընկ. ՆԵՄՑԵՎԻՆ։ Նեմցևը պետք է մշակեր կարմիր բանակայինների հետ (առաջին խմբակի) պառկած հրաձգության համար կրակի պատրաստությունը գործադրելով փոկը։

Յերկրորդ խմբակը պարապում եր նշանառությունից փոքր հեռավորության վրա հրահանգիչ ԲՈՒԴԿՈՑԻ ղեկավարությամբ։ Վերջապես յերրորդ. կետում (խմբակում) կարմիր բանակայինները հրահանգչի հետ պարապում եյին հեռավորությունների վորոշմամբ մինչև 400 մետր հեռավորության վրա, ամենապարզ գործիքների օգնությամբ—փամփուշտի, պահունակի, լուցկու տուփի, հրացանի նշանոցի, մատի օգնությամբ։

Ինքս այդ ժամանակ աշխատում եմ կոնտրոլ կետում։ Կարմիր բանակայինները հերթով գալիս են ինձ մոտ, յես ստուգում եմ նրանց, թե ինչ չափով յուրացրել են անցածն իրենց կետերում, ցույց եմ տալիս նրանց սխալները և անհրաժեշտության դեպքում վերադարձնում եմ նրանց լրացուցիչ մարզանքի համար։

Հրաձգային պարապմունքների այդպիսի կազմակերպումն ինձ հնարավորություն տվեց ձեռք բերել մեծ հաջողություններ։ Իմ ջոկն առաջինը մյուսների նկատմամբ մշակեց հրաձգությունների կուրսի առաջին խնդիրը, ստանալով «գերազանց» գնահատական։ Նույնպես «գերազանց» գնահատականով և մշակել իմ ջոկը նաև յերկրորդ խնդիրը։ Բացի դրանից, յես լրացուցիչ կերպով մարզում եմ իմ ջոկի կարմիր բանակայիններին, վորպեսզի նրանք դասակարգման համար պաշտոնները հանձնեն հաջողությամբ։

32-րդ հրաձգային դիվիզիայում յեղած ժամանակ մենք մեր գլխավոր ուշադրությունը դարձրինք այն բանի վրա, թե ինչպես նրանք լայնորեն կիրառում են կարմիր բանակայինների հրահանգչական ունակություններն ուսուցման հենց առաջին որից։ Յուրաքանչյուր դասի ժամանակ կրտսեր հրամատարները նրանցում հենվում եյին ուսուցիչ-հրահանգիչների ոգնության վրա։

Այդ փորձը նույնպես յես փոխադրեցի իմ ջոկը։ Այժմ յես ուզում եմ պատմել, թե ինչպես եմ յես զարգացնում իմ ջոկի կարմիր բանակայինների հրահանգչական ունակությունները, թե ինչպես են ոգնում ինձ հրահանգիչները ջոկի պատրաստության գործում։

## ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հենց առաջին որից յես սկսեցի կառուցել իմ աշխատանքը ջոկի հետ այնպես, վորպեսզի կարողանամ հայտաբերել լավագույն, ընդունակ, ձեռներեց կարմիր բանակայիններին և պատրաստեմ նրանցից հրահանգիչներ։

Ես աշխատում էյի այնպես պարապել, որպեսզի յուրաքանչյուր կարմիր բանակային դասերի ժամանակ ոչ միայն ինքը սովորի, այլև ստանա այնպիսի հմտություններ ու գիտելիքներ, որ կարողանա սովորեցնել նաև մյուսներին, իր ընկերներին։ Չէ՞ որ կարող է պատահել, որ ավելի ընդունակ կարմիր բանակայիններին դպրոց ուղարկենք և նրանք պետք է դառնան ջոկի հրամանատարներ և ապագայում նրանց կվիճակվի պատրաստել իրենց ջոկի կարմիր բանակայիններին։ Այդ պատճառով, որքան հնարավոր է, լայնորեն պետք է օգտագործել հրահանգիչներին պարապմունքների ժամանակ։

Շարային պատրաստության ժամանակ իմ ջոկում հենց սկզբից աչքի ընկան կարմիր բանակայիններ Բուդկոն և Նեմցևը և ես նրանց էլ օգտագործեցի որպես հրահանգիչների։ Այդպիսի առաջավորներ աչքի ընկան նաև հրաձգային պատրաստության ժամանակ, ես դրանց օգտագործում եմ, որպես իմ օգնականների, հրաձգային դասերի ժամանակ։

Ֆիզիկական պատրաստությունից նույնպես ես ունեմ օգնականներ—ջոկի լավագույն ֆիզկուլտուրնիկները։ Ես նրանց առանձնացրել եմ կարմիր բանակայինների հետ պարապելու համար և այդպիսով պատվաստում եմ նրանց մեջ անհրաժեշտ հրահանգչական-մեթոդական ունակություններ, զարգացնում եմ նրանց մեջ հրամանատարական լեզուն։

Ես հատուկ ուշադրություն եմ դարձնում հրահանգիչների կողմից պարապմունքների համար պատրաստվելու վրա։ Ամեն դասից առաջ ես հավաքում եմ հրահանգիչներին և նրանց հետ անց եմ կացնում կարճատև հրահանգում։ Հրահանգման ժամանակ ես ինքս ցույց եմ տալիս, թե ինչպես պետք է կատարել այս կամ այն հնարը, որն անհրաժեշտ է մշակել պարապմունքների ժամանակ։ Այնուհետև ստուգում եմ հրահանգիչներին, թե ինչպես են նրանք կատարում այդ հնարը (պրիոմը) և ուղղում եմ նրանց սխալները։

Բացի դրանից, ես նրանց տալիս եմ հատուկ մեթոդական ցուցումներ, թե ինչպես պետք է անցկացնել պարապմունքները, ինչի վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել, ինչպես կազմակերպել ուսուցումը խմբակում։

Արդյունքն այն է լինում, վոր իմ հրահանգիչները լավ են կատարում իրենց պարտականությունները։ Նրանք կարծես բանակայիններին թույլ չեն տալիս գալու ինձ մոտ մինչև վոր վերջնականապես մշակում են այն նվագներն ու ունակությունները, վորոնք նշված են տվյալ դասի համար։

## ԼԱՅՆՈՐԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻՆ

Մեծ արդյունք տվեց ջոկի պատրաստության գործում իմ օգնականների-հրահանգիչների լայնորեն օգտագործումը։

ՆԱԽ վոր այդ բավականին հեշտացրեց իմ աշխատանքը, վորովհետև յես ազատ եյի զանազան մանր բաներից՝ ջոկի յուրաքանչյուր կարմիր բանակայինին նվագները մշակելու ժամանակ. ՅԵՐԿՐՈՐԴ՝ հրահանգիչների օգտագործումը հնարավորություն է տալիս ինձ զբաղվել իմ հիմնական գործով, այն է՝ կարմիր բանակայիններին ստուգելով, թե ինչպես են նրանք յուրացրել այս կամ այն վարժությունը, այս կամ այն դասը և հսկում եմ նրանց ունակությունները։ Իհարկե անհրաժեշտ է կոնտրոլի յենթարկել հրահանգիչներին, ստուգել խմբակներում տարվող պարապմունքների կազմակերպումը, անմիջապես ուղղել նկատված սխալները։

32-րդ հրաձգային դիվիզիայի կրտսեր հրամանատարները մեզ ցույց տվին նաև այն, թե ինչ ձևով են նրանք տանում մարտիկների յուրացման հաշվառումը յուրաքանչյուր առարկայից։ Նրանք այդ գործում մեր ուշադրությունը հրավիրեցին հաշվառման կոնկրետության վրա։

Նրանց տետրակներով կարելի յե ամեն որ իմանալ, թե ինչպես է ընթանում մարտիկի քաղաքական ու մարտական պատրաստության գործը, ինչ սխալներ ունի տվյալ մարտիկը, ինչ սխալներ է նա թույլ տվել դասի ժամանակ, ինչ միջոցներ է ձեռք առնվել այդ սխալները վերացնելու համար և թե արդյոք վերացվե՞լ են այդ սխալները, թե վոչ։

Այդպիսի հաշվառումը յես գործադրում եմ նաև իմ ջոկում։

Յես բլոկնոտ ունեմ, վորի մեջ տանում եմ իմ ջոկի յուրա

քանչյուր կարմիր բանակայինի պատրաստության հաշվառումը բոլոր առարկաներից, բացի տակտիկական պատրաստությունից։

ՀՏԳՄ համար յես պահում եմ հատուկ տետրակ, վորովհետև տակտիկական խնդիրները մշակելու ժամանակ կարմիր բանակայինները սխալներ շատ են անում և անհրաժեշտ է այդ բոլոր սխալները գրանցել։

Իմ հաշվառման բլոկնոտում յես գրանցում եմ հաշվառման բոլոր տվյալները յուրաքանչյուր պարապմունքից հետո. Յես գրանցում եմ այն բոլոր սխալները, վորոնք հայտաբերվել են իմ կողմից կարմիր բանակայիններին ստուգելու ժամանակ, կամ վորոնց մասին զեկուցում են ինձ իմ ոգնական-հրահանգիչները։

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՏ ՄՆԱՑՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Յես խնամքով ուշադրություն եմ կազմակերպում յետ մնացողներին։ Ահա մի որինակ. կարմիր բանակային Սանյանը հիվանդ էր և վերադարձավ հիվանդանոցից մեկուկես ամիս նրանից հետո, յերբ մենք սկսել եյինք ուսուցումը։ Յես նրան կցեցի ընկ. Բուդկոյին։ Ընկ. Բուդկոն սկսեց պարապել նրա հետ բոլոր անցածներից և մանավանդ սկսեց նրան մարզել հրաձգային գործից։ Յես սիստեմատիկ ստուգում եյի կցված կարմիր բանակային Բուդկոյի աշխատանքը։ Յեվ ինչ, ընկ. Սանյանն այնպես սովորեց, վոր անցավ առաջավորներին շարքը մարտական պատրաստության բոլոր ճյուղերից։

Յեթե պատահում է, վոր ամրացված ընկերն ինձ զեկուցում է, թե ինքը չի կարող ուղղել յետ մնացողին, այն ժամանակ ինքս եմ նրան ոգնության հասնում։ Որինակ՝ յես հարկադրված յեղա բավական յերկար ժամանակ աշխատել կարմիր բանակային Ռյաբցևի հետ, մինչև յես նրան սովորեցրի ճշտորեն բաց անել արձակները, սովորեցրի հավասար հատիկ վերցնել։ Վերջիվերջո ինձ հաջողվեց նրան հասցնել մյուս կարմիր բանակայինների մարտական պատրաստության մակարդակին։

32-րդ հրաձգային դիվիզիայում մենք ուշադրություն դարձրինք սոցիալիստական մրցակցության լավ կազմակերպման վրա, նրա կոնկրետության վրա և ժամանակին արդյունքներն արձանագրելու վրա։

Այնտեղ կարմիր բանակայինները իրենց պարտավորու-թյունները փակցնում են լենինյան անկյան աչքի ընկնող տեղում և ջոկի հրամանատարն ամեն որ նշումներ է անում այդ պարտավո-րությունների կատարման մասին:

## ՋՈԿԻ ՀՐԱՄԱՏԱՐՆ Ե ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԲՅԵԿՏՆԵՐԸ

Այժմ իմ ջոկում նույնպես կարգավորված է մրցակցու-թյունը: Մրցակցում են հրահանգիչներն իրար հետ և կարմիր բանակայինները: Յես առաջադրում եմ նրանց համար մրցակ-ցության ոբյեկտներ. նրանք նույնպես փակցնում են իրենց պարտավորությունները: Մրցակցության ոբյեկտները յես տա-լիս եմ ամեն որվա համար, յուրաքանչյուր խնդրի համար և դա-սը վերջանալուց հետո հանրագումարի յեմ բերում արդյունքնե-րը, իմանալու համար թե ով ինչպես է յուրացրել մշակած խըն-դիրը կամ անցած առարկան:

Յուրաքանչյուր հնգօրյակում մեկ անգամ յես հրահանգիչ-ների և կարմիր բանակայինների մրցակցության արդյունքնե-րի հանրագումարն եմ կատարում և հայտարարում եմ, թե նը-րանք ինչպես են կատարել իրենց պարտավորությունները:

32-րդ դիվիզիայում մենք հետաքրքրվեցինք նաև նրանով, թե կրտսեր հրամանատարներն ինչպես են բարձրացնում իրենց կարմիր բանակայինների պատասխանատվությունը տեխնիկա-յի, գույքի խնամքի համար, ինչպես են դաստիարակում նրանց մեջ կուլտուրականություն և կազմակերպվածության սովորու-թյունները:

Այսպես յուրաքանչյուր ջոկում ամբողջ գույքը, դասական պի-տույքները բաշխված են առանձին կարմիր բանակայինների միջև, վորոնք պատասխանատու յեն նրանց ամբողջության, մա-քրության համար:

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Իմ ջոկում նույնպես յես սկսեցի գործադրել նրանց վերոհի-շյալ ձևը: Ջոկի ամբողջ գույքը, ամբողջ ինվենտարը հանրա-կացարանում, այն է՝ մահճակալները, տումբոչկաները, դասա-

*կան (ուսուցման) պարագաները (պիտույքները) և այլն, յես նույնպես թաշխել եմ առանձին կարմիր բանակայինների մեջ, վորոնք պատասխանատու յեն նրանց համար։*

*Այսպիսով՝ յես ձեռք եմ բերել իմ ջոկում որինակելի կարգ ու կանոն, բարձրացրել եմ կարմիր բանակայինների պատասխանատվության զգացմունքը, պատվաստում եմ նրանց մեջ կուլտուրականության և կազմակերպվածության ունակություններ։*

*Այսպես օգտագործելով 32-րդ հրաձգային Սարատովյան դիվիզիայի փորձը, այդ փորձը յուրացնելով ինքս և փոխադրելով իմ ջոկը, ծավալելով սոցիալիստական մրցակցությունը, յես կարողացա հասնել նրան, վոր իմ ջոկը մարտական ու քաղաքական պատրաստության մեջ այժմ ձեռք է բերել խոշոր հաջողություններ և առաջավորների շարքն է անցել։*

*Ջոկիս գերազանց պատրաստության համար փոքր ստորաբաժանումների մրցակցության 3-րդ էտապում յես պարգևատրվեցի «Բայեվայա Պոդգոտովկա» թերթով և Մոսկվա մեկնելու իրավունքով։*

*Յես մեկնեյի Մոսկվայում մայիսմեկյան զորահանդեսին մասնակցող 100 կրտսեր հրամանատարներից, և իմ պարտքն եմ համարում իմ ջոկի պատրաստության փորձը փոխանցել ԲԳԿԲ բոլոր կրտսեր հրամանատարներին։*

Ջոկի հրամանատար՝
ՍԻՎԱՐՈՎ



H 41520
...ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ...
...ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՔՈՂԱՐԿ

Ցնցվում է կանաչազարդ անտառի յեզրը։ Այդտեղից մաքուր դաշտով դեպի հակառակորդի պաշտպանության առջևի յեզրը շարժվում է թփուտ։ Առանձին թփերը մերթ կանգ են առնում տեղում, մերթ կրկին շարժվում են առաջ։ Ինչպիսի սքանչելի նշան է պաշտպանության հրաձիգների համար։

Ինչով է տարբերվում այդպիսի քողարկումը հին ռուսական բանակի քողարկումից, վորին անշնորհք զեներալները Մանջուրիայի դաշտերն եյին դուրս բերել սև փափախներով։

Բացարձակապես վոչնչով։

Վաղուց անցած-գնացած ժամանակներում վայրենին, զարդարվելով ճյուղերով, սողում եր դեպի իր թշնամին։ Նա քողարկվում եր, ձուլվելով շրջակա տեղանքի հետ, նա այդ տեղանքում անտեսանելի յեր դառնում, ինչպես անտեսանելի յե դառնում կանաչ գորտը կանաչ դաշտում, դեղինը՝ դեղին ավազում, ինչպես անտեսանելի յե դառնում Ռուսաստանի սպիտակ նապաստակը ձերմակ ձյունի վրա։ Գետի հանդիպելիս վայրենին գլխով ջրի տակն եր սուզվում, բերանն առնելով մի յեղեգ (ղամիշ) և այլևս չկար վայրենին, նա անհայտանում եր։ Իսկ գետի վրայով լողում եր միայն յեղեգի կտորի ծայրը։

Վայրենին խորամանկությամբ եր զինվում և թաքնվում եր։ Այդ չուզեցին ու չկարողացան հասկանալ ռուսական զեներալները, վորոնք հափշտակվելով զորահանդեսներով և արտաքին շուքով, զինվորներին բաց դաշտերն եյին քշում, բլուրների վրա դնում եյին ամբողջ մարտկոցներ։ Մինչդեռ այդ ժամանակ ճապոնական հրետանին, առաջ քաշելով իր դիտակետերը, թաքնվում եր անտառակներում, ծառերի յետևում, բլրակների յետևում, գաոլյանի մացառներում։ Յեվ ճապոնական արկերն անհայտ վայրերից տեղում եյին՝ խիտախուռն բլրակի վրա բարձրացած մարտկոցի գլխին։ Վայր եր ընկնում խիզախ կապիտանը, պայթում եյին

ջղաձգություններից զինվորները: Իսկ Թիկունքում յերգում եյին.

◆ Յեվ Մանջուրիայում հեռու ցուրտ ու վաճառականների համար վայր կդնեն իրենց գլուխները խիզախ շատ պանծալի քաջեր:

Յեվ վայր եյին դնում գլուխները գեներալական հիմարության, բթամտության պատճառով, վորը գերազանցում եր բուն վայրենու բթամտությունը:

Սկսվեց իմպերիալիստական պատերազմը: Հանդես յեկավ նոր տեխնիկա: Մարտադաշտն առատորեն ծածկեց գնդացրային ու հրացանային կրակը: Մշակվեց հատուկ հրաձգի՝ սնայպերի ոճը: Հանդես յեկան հրետանական դիտողության ավելի կատարելագործված միջոցներ: Ավելացան հարձակման միջոցները: Դրանից հակառակ ստեղծվեցին պաշտպանության նոր միջոցներ, և նրանց թվում յեկավ նոր քողարկումը— յուրաքանչյուր պատերազմի մշտական ուղեկիցը:

Մարտիկը հագավ ամառը պաշտպանական գույնի վերնաշապիկ և մինչև իսկ գլխարկի նշանը պատեց պաշտպանական ներկով: Նա մտավ հողի տակ, իսկ խրամատի հողաթումբը պատեց ճիմով, տալով նրան շրջակա տեղանքի տեսք: Հարձակման ժամանակ մարտիկն սկսեց թաքնվել յուրաքանչյուր հողակոշտի յետևը, փոսում, արկից առաջացած ձագարում, սկսեց թաքնվել թփերում, անտառակներում ու տուններում:

Հրետանին յետ քաշվեց, գնաց բլուրների հակառակ լանջերը, անտառները, կառուցեց կեղծ խրամատներ, մարտկոցները: Ուղիղ նշանառությունը փոխարինելու յեկավ հրաձգությունը խորքից, մի քանի կիլոմետր և մինչև իսկ մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորությունից:

Վերջացավ իմպերիալիստական պատերազմը: Բայց չկա խաղաղություն: Պատերազմը շարունակվում է: Կապիտալիստները պատրաստվում են: Գործն ընթանում է դեպի նոր մեծ պատերազմ: Աճում է վոչնչացման տեխնիկան: Աճում են նաև պաշտպանության միջոցները: Հանդես յեկավ քողարկը.— քողարկ—կոստյումը, քողարկ—խալաթը: Ներկայումս քողարկ—խալաթ հագած հետախույզը չի յերևում արդեն մի քանի քայլի վրայից:

Բացի քողարկ—խալաթից ստեղծված է ուղղահայաց քողարկ անհատական մարտիկի համար։ Այդ քողարկը չափազանց թեթև է։ Մարտիկը կրում է այն պատյանի մեջ կամ մեջքին։ Քողարկը յերեք գույնի յէ. կանաչ դաշտի համար՝ կանաչ գույնի, խունացած դեղին փոնի համար՝ դեղնավուն, իսկ մերկ հողի համար՝ գորշ։ Քողարկը մարտիկին հակառակորդի համար անտեսանելի յէ դարձնում 150 մետրից, բայց մարտիկին հնարավորություն է տալիս տեսնելու և հարվածելու համար։

Այսպիսի քողարկներ ստեղծված են նաև հաստոցավոր գնդացրի ու հրանոթի համար։

Այդ քողարկման տեխնիկական միջոցները թեթև են, շարժական են և արագ տեղափոխվում են մարտիկի ցանկությամբ ու միշտ գտնվում են նրա հետ։

Բացի դրանից ստեղծված է առանձնապես անշարժ քողարկ։

Գալիք պատերազմում դուք կարող եք տեսնել ծառ, կոճղ, բլրակ, բայց չհավատաք ձեր աչքերին։ Այդ բոլորը կարող են արհեստական լինել։ Այդ կարող է քողարկ լինել։ Այդ առարկներից յուրաքանչյուրում կարող է նստած լինել սնայպեր—կործանիչը։

1914 թվին մարտադաշտի վրա բարձրացած սավառնակն ասաց. «Ամեն ինչ տեսնում եմ»։ Այն ամենը, ինչ հակառակորդը խնամքով թաքցնում եր թիկունքում,— ռեզերվները, փոխադրությունները, կենտրոնացումը, բեռնավորումը, բեռնաթափումը, հենակետերը,— բոլորը հայտնի դարձան հակառակորդին։

Կայարանների, զորասյուների, պաշտպանության առջևի յեզրի ու խորքի վրա տեղացին ռումբեր սավառնակներից ու հրետանու արկեր։

Այն ժամանակ հանդես յեկավ ցանցը։ Փոքր ու մեծ ցանց։ Ցանց, վորի տակ ֆրանսացիք թաքցրին Փարիզը։

Այն ժամանակ հանդես յեկավ դեկորացիան,— այնպիսի դեկորացիա, վորի ոգնությամբ հաջողվեց «տեղափոխել» Փարիզը 70 կիլոմետր մի այլ կողմ։ Թող գերմանական ոդաչուները ռումբեր նետեն կեղծ Փարիզի վրա։

Բայց գիտությունը չափազանց ճիշտ է։ Նա քարտեզներով, քարտեզի աստիճաններով գտավ իսկական Փարիզը և 1918 թվի

մարտի 23-ի գիշերը նրա փողոցներում ընկավ մինչ այդ չտեսնված ավերիչ ուժի 21 արկ։ Այսպես արկերը վորոշ ընդմիջումներով ընկնում էյին 44 օրվա ընթացքում։ Վորտեղից էյին նրանք ընկնում, յերբ յերկնքում վոչ մի սավառնակ չկար։

Փարիզից 122 կիլոմետրի վրա Լիոնի անտառի հյուսիսային յեզրին գտնվում եր Կրուպպի 150 տոննանոց գերհեռահար թընդանոթը,— գերմանական իմպերիալիզմի փառք ու պարծանքը։ Նրա փողաբերանից թռչում էյին վիթխարի արկեր և հաղթահարելով 140 կիլոմետր օդային ճանապարհ, հարվածում էյին Փարիզը, խուճապի մատնելով բնակիչներին։

Միթե ֆրանսական օդաչուները չկարողացան գտնել ու վոչնչացնել այդ հրեշավոր թնդանոթը։ Կարողացան, բայց... նույն անտառի հարավ-արևելյան յեզրին դրված եր նույնպիսի թնդանոթ միայն նա փայտից եր պատրաստված։ Նա նույնպես «կրակում եր», մանավանդ, յերբ օդում յերևում էյին ֆրանսական սավառնակները։ Ֆրանսացիք այդ փայտե թնդանոթի վրա հազարավոր տոնն մետաղ թափեցին։ Իսկ իսկական թնդանոթը մնաց առանց հայտաբերվելու մինչև պատերազմի վերջը։

Խորամանկում էյին։ Ցույց էյին տալիս կեղծը և թագցնում էյին իսկականը։ Քողարկ։

Սավառնակն ամեն ինչ տեսնում է։ Բայց այն, ինչ թագցրված է, ծածկված է, ձուլված է տեղանքի հետ, նա չի տեսնում։

Ցեվ ժամանակակից տեխնիկան ստեղծել է մարտիկի, զինվորի, հրանոթի, տանկի, տանկերի դասակի, նրանց ամբողջ վաշտի համար հորիզոնական ցանց, վորն ամեն ինչ թագցնում է օդային դիտողի աչքից։

Սավառնակը փնտրում է զորքերին ճանապարհների վրա, կայարաններում, գյուղերում։ Բայց կար ճանապարհ, և հանկարծ նա չկա։ Կար կայարան և անհայտացավ։ Նրանց փոխարեն մաքուր դաշտ է։ Իսկ ճանապարհը, կայարանը, գյուղը յերևում են մի այլ տեղում։ Թող դրանց վրա ինչքան կուզի օդաչուն ռումբեր նետի։

Պատերազմն ունի իր քողարկը։ Վորքան ավելի լավ են օգտագործված տեխնիկական և առաջին հերթին քողարկման բնական միջոցները (տեղանքը, տեղական առարկաները), վորքան ավելի լավ է քողարկը, այնչափ ավելի քիչ են հարվածները, այնչափ ավելի մոտ են հաղթանակները։ Սեխպնոյ

«ԲՈՅԵՎԱՅԱ ՊՈՏԳԱՏՈՎԿԱ»

# ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԴԱՐՁԻՐ

Ժամանակակից պատերազմը, առատորեն հագեցված լինելով կռվի զանազան տեխնիկական միջոցներով, համառորեն պահանջում է զորամասից, ստորաբաժանումից, հրամանատարից ու մարտիկից, գերազանցորեն քողարկվել թե՛ վերերկրյա և թե՛ օդային հակառակորդից.

Քողարկումը հետախուզության մեջ, հարձակողական մարտում հնարավորություն է տալիս աննկատելիորեն, թաքնված կերպով մոտենալ հակառակորդին և հանկարծակի ձևով հարվածել նրա թիկին ու թևերին.

Քողարկումը պաշտպանության մեջ հնարավորություն է տալիս՝ անտեսանելի մնալ հակառակորդի համար, մոտ թողնել նրան և հանկարծակի, ավելի լավ և թևային կրակով, ոչնչացնել նրան.

Քողարկվելու—հակառակորդի համար անտեսանելի մնալու և միևնույն ժամանակ թշնամուն տեսնելու արվեստը յուրացնում և խնամքով օգտագործել տեղանքը, տեղական առարկաները և զանազան հարմարանքները:

Մարտիկը պետք է անտեսանելի մնա հակառակորդի համար 50 մետրից, գնդացիրը՝ 200 մետրից.

Օդայինի քողարկումը մի ամբողջ արվեստ է, վորովհետև մեր զորամասերին այժմ խիստ սպառնում են ինքնաթիռները: Այդ արվեստին պարտավոր են տիրապետել բոլոր հրաձիգները (և մանավանդ գնդացրորդները), հեծելազորները, հրետանավորները, թիկունքի մարտիկները:

Առաջին հերթին քողարկման հարցերը պետք է յուրացնեն կրտսեր հրամանատարները, վորովհետև նրանք են վարում մարտիկի անհատական ուսուցումը և նրանք են պատասխանատու իրենց ստորաբաժանումների պատրաստության համար:

Մարտիկներին սովորեցնելու և նրանից պահանջելու համար հարկավոր է, վոր ինքը հրամանատարը կարողանա գերազանցորեն անել այն, ինչ սովորեցնում է:

Մարտիկին քողարկումը սովորեցնելու համար հրամանատարը պետք ե ինքը գերազանցորեն քողարկվի, գերազանց-քողարկման օրինակ ցույց տա և ունենա ուսուցման մեթոդական լավ ունակություններ։

Տակտիկական պարապմունքներում հաճախ կարելի յե տեսնել այսպիսի պատկեր. պառկած ե մարտիկների քողարկված խմբակը, իսկ նրանից շուրջը քայլում ե հրամանատարը. Հարց ենք տալիս, կա՞ արդյոք այստեղ քողարկում։ Իհարկե՝ վոչ։ Նախ՝ խմբակի շուրջը քայլող հրամանատարը ցույց չի տալիս մարտիկներին անձնական օրինակ, թե ինչպես պետք ե քողարկվել։ Յերկրորդ՝ այդ հրամանատարն ապաքողարկում ե խմբակը։ Յերրորդ՝ այդպիսի հրամանատարը մարտում սքանչելի նշան ե հանդիսանում հակառակորդի սնայպերի և մինչև անգամ տանկային հրաձգի համար։

Անհրաժեշտ ե հասնել այնպիսի դրության, յերբ բոլոր պարապմունքներում հրամանատարն անձնական օրինակով ցույց ե ե տալիս մարտիկներին, թե ինչպես պետք ե քողարկվել։

Յերբ հրամանատարը վոչ թե դեկլամարում ե ուսուցումը, այլ գործում ե միավորման (դասակի, վաշտի) կազմում, նա պարտավոր ե, ինչպես և մարտիկները հարմարվել, տեղանքին և անպայման քողարկվել, վոչ մի դեպքում չմատնելով իր ներկայությամբ ամբողջ խմբակին։

Հակառակորդի սնայպերն առաջին հերթին փնտրում ե առաջնորդ-հրամանատարին։ Ահա թե ինչու հրամանատարն իրավունք չունի տարբերվելու մարտիկներից իր արտաքին տեսքով ու հագուստով։

Մեր տակտիկական պարապմունքները պետք ե մոտենան մարտական իրական պարագային։ Այդ պարապմունքներում մարտիկներից մենք պահանջում ենք այնպիսի գործողություններ, վոր նրանք պետք ե կատարեն իսկական մարտում։ Նույնը պետք ե պահանջել և հրամանատարից։ Հրամանատարը պարտավոր ե պարապմունքներում խնամքով քողարկվել, լինել նույն հագուստով, ինչ և մարտիկները, և անպայման ունենալ զրահ կրել։

Քողարկման յուրացումն իր ամբողջ բազմազանությամբ ավելյալ կարգում հանդիսանում ե զորքերի մարտական պատրաստության անհատական խնդիրներից մեկը ուսուցման ամբողջ

շրջանում։ Այդ խնդիրն ամբողջովին ծանրանում է կրտսեր հրամատարների վրա։

Կրտսեր հրամանատարների ուշադրությունն ամռան շրջանում պետք է բևեռված լինի քողարկման հարցերի վրա։ Քողարկման փորձը պետք է դառնա մարտիկների ու հրամանատարների լայն խավերի սեփականությունը։ Այս դեպքում մեզ կհաջողվի գերազանցորեն յուրացնել քողարկման հարցը և այդպիսով էլ ավելի բարձրացնել մեր ստորաբաժանումների մարտական պատրաստությունը։

«Բ. Պ.»

---

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

«Ուղեցույց»-ի հրատարակման առթիվ 2
1. Հրաձիգ ջոկի հրամանատարի պարտականությունները կրակի ղեկավարման ասպարեզում . . . . 3
2. Իմացիր հրացանի անսարքությունները . . 7
3. Ինչպես եմ ես կազմակերպում դասը . . . 10
4. Քողարկ . . . . . . . . . . . . . . 18
5. Անտեսանելի դարձիր . . . . . . . . . . 22

---

Պատ. խմբագիր՝ Գ. ԳՅՈԼՆՑՅԱՆ
Սրբագրիչ՝ Տ. ՏԵՐՈՒՆԻ
Ծրջլիտ № 71
Տիրաժ 1000

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220041520

[104]

A $\frac{II}{41520}$

578

**Спутник
Младшего
Командира**